է Բազմավէպի մէջ շատ յօդուածներ. վերջին ժամանակներս՝ նաև Ո. Կ. ստարագրութեամբ։ Դեռ նորերս հրատարակած էր նաև Թուռնըպիզի «Հայաստան և Հայ Եկեղց. Պատմութիւն։

Հ. Աւետիք Վ. է կը մնան այժմ աւելի հետաքրքրական՝ իբր ձեռագիր անտիպ երկասիրութիւն՝ համառօտ Հայ Եկեղ. պատմութիւն մը ի սկզբանէ մինչև մեր օրերը, ինչպէս նաև Քրիստոնէական վարդապետութիւն մը։ Բաց ասոնի ուշադրութեան արժանի է համեմատական աշխատութիւն մը Հայ պատարագի աղօթից վրայ, ուր նշանակած է զանազան ճաշոցներու տարբերութիւնները։ Սկսած էր պատրաստել նաև Մայրավանքիս Ձեռագրաց Նոր Ցուցակ մը Հ. Բ. Սարգիսեանի Մայր Ցուցակէն տարբեր կարգով և ոճով։ Հոն ամփոփուած էին 300–է աւելի գրչագիրներ՝ սեղմ պարունակութեամբ և յարակից կարևոր ծանօթութիւններով, ինչ որ կիսաւարտ կը մնայ այսօր։ Պատրաստ ունէր նաև Ընդհ. Եկ. Հայրախօսութիւն մը (յետոյ կորսուած՝ աքսորի միջոց), ուր կային Հայ Եկեղեցւոյ նախկին Հայրերէն ալ։ Իր այս երկասիրութեան վրայէն դասախօսած էր մեզ ատենօք՝ երբ կը վայելէինք միաժամանակ իր հայրագորով վերակացութիւնը։

Ահա ուրեմն Առաքինին, ահա բազմերախտ Մխիթարեանը՝ Լուսահոգի Վ. Հ. Աւետիք Վ. Գազէզեան, որուն անմոռանալի յիշատակին ի սրտէ կը նուիրուի այս համեստ աշխատութիւնը «ՄԱՑՐ ԴԻՒԱՆ»ը՝ իբրև դոյզն նշան սիրոյ և երախտագիտութեան։

Հ. Ղ. Տ.